ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Էդուարդ Մարտիրոսյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրեն

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Հնդկաստան, քաղաք Մումբայ, ապրիլի 23-ից 26-ը, 2024թ.

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Հնդկական ատոմային էներգիայի կորպորացիա (NPCIL)
   ՇԿՀԱ-ի Կառավարիչների Խորհուրդ (ՇԿՀԱ Մոսկովյան Կենտրոն):

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցիացիայի Մոսկովյան կենտրոնի (այսուհետև՝ ՇԿՀԱ ՄԿ) ընդհանուր ժողովին և Կառավարիչների խորհրդի նիստին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Լսվել են՝

   - ՇԿՀԱ ՄԿ-ի տնօրեն Վ. Ակսյոնովի ելույթը 2023 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի ապրիլ ընկած ժամանակահատվածում կենտրոնի գործունեության վերաբերյալ
   - ՇԿՀԱ ՄԿ նախորդ ընդհանուր ժողովների որոշումների կատարման հաշվետվությունը
   - ՇԿՀԱ ՄԿ վերստուգիչ հանձնաժողովի տարեկան հաշվետվությունը և նորընտիր կազմը
   - ՇԿՀԱ ՄԿ գործունեության ներքին ինքնագնահատման արդյունքները
   - ՇԿՀԱ ՄԿ-ի տնօրեն Վ. Ակսյոնովի ելույթը հետևյալ հարցերի վերաբերյալ՝ «Նոր ընկերությունների ներգրավում ՇԿՀԱ ՄԿ-ում: Աշխատանք նոր և հավանական անդամների հետ»
   - Հնդկական ատոմային էներգիայի կորպորացիայի (NPCIL) ներկայացումը (պատմություն, ներկա վիճակ և հեռանկարներ): Քննարկում հարց-պատասխան ձևաչափով
   - ՇԿՀԱ ՄԿ-ին նոր անդամակցած Բանգլադեշի Ատոմային էներգիայի հանձնաժողովի նախագահ Մուհամմադ Շավքաթ Աքբարի ելույթը
   - Իմ ելույթը, որպես ՇԿՀԱ ՄԿ կառավարիչների խորհրդի նախագահ՝ նվիրված ՇԿՀԱ ՄԿ գործունեության նկարագրին և գնահատմանը

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Կազմակերպչական հարցերի քննարկումից հետո նիստի մասնակիցներն անցել են ծրագրով նախատեսված թեմաների քննարկմանը:
Մասնավորապես, ԿԽ քարտուղար Լ. Զավյալովը ներկայացրել է նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքը:
ՇԿՀԱ ՄԿ ղեկավարությունը մասնակիցներին է ներկայացրել կազմակերպության աշխատանքային պլանի առավել նշանակալի ուղղությունների իրականացման արդյունքները:
Լ. Զավյալովը և գլխավոր հաշվապահ Մ. Պանարինան մասնակիցներին առաջարկել են ուսումնասիրել կազմակերպության աշխատանքի պլանավորման և ֆինանսական վիճակի վերաբերյալ հարցերը:
Վ. Ակսյոնովն ամփոփել է բոլոր հարցերը «ՇԿՀԱ ՄԿ կազմակերպական կայունության ապահովմանն ուղղված կոմպենսացնող միջոցառումների պլան 2024-2026թթ. համար» ելույթով:
Ընդհանուր ժողովի աշխատանքի ավարտով օրակարգերը համարվել են սպառված:
Միջոցառումների ծրագրերից դուրս ԿԽ մասնակիցները քննարկել են ասոցիացիայի՝ 2024թ. գործունեության առանձին ուղղությունները՝ ըստ ամիսների, որոնք ոլորտային ընդհանուր բնույթ են կրում և պետք է հաշվի առնվեն տարածաշրջանային կենտրոնների կողմից:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Գործընկերների հետ շփումներ նիստերի ընդմիջումներին և աշխատանքային ժամերից դուրս, ստացված տեղեկատվության քննարկում, կարծիքների փոխանակում, առաջարկությունների պատրաստում և այլն:
Քննարկվել են նաև հետևյալ հարցերը՝

- Բ կարգի աշխատողների մրցույթի արդյունքների հաստատում
- ՇԿՀԱ-ի ՄԿ-ի քաղաքականության թարմացումների դիտարկում և հաստատում
- ՇԿՀԱ-ի ՄԿ-ի Կառավարիչների խորհրդի հաջորդ նիստի ամսաթվի հաստատումը

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աշխատանքային քննարկումների ընթացքում և կուլիսներում բավարար տեղեկատվություն է ստացվել ՇԿՀԱ-ի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ ձևավորելու համար:

Միջոցառումը բավականին արդյունավետ և ինֆորմատիվ էր առաջին հերթին ակտիվ քննարկումների շնորհիվ:

Քննարկումներն ու բանակցություններն ընթացել են առողջ և կառուցողական, բարենպաստ աշխատանքային մթնոլորտում, և բավականին արդյունավետ են եղել նպատակին հասնելու տեսանկյունից:

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**